

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ԼՂՀ Շուշի քաղաքի Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոցի և
Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի միջև

«3 մայիսի 2013թ.

ք. Շուշի

ԼՂՀ «Շուշիի Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝
Դպրոց)՝ ի դեմս տնօրեն Նազիկ Նալբանդյանի և «Երևանի «Մխիթար Սեբաստացի»
կրթահամալիր» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Կրթահամալիր)՝ ի դեմս տնօրեն Աշոտ Բլեյանի
(այսուհետ՝ Կողմեր), որ գործում են իրենց կանոնադրությունների համաձայն, կնքեցին
սույն համաձայնագիրը գործընկերության մասին:

Նպատակը

Կրթահամալիրում ՀՀ ԿԳ նախարարության աջակցությամբ իրականացվող
հեղինակային կրթական ծրագրի փորձի հիման վրա Դպրոցի արդիականացման ծրագրի
մշակում և իրականացման կազմակերպում:

Համաձայնագրի առարկան

1. Կրթահամալիրի կողմից Դպրոցի զարգացման ծրագրի մշակման աջակցություն
2. Թվային միջոցների ամբողջական կիրառում Դպրոցի սովորողի և ուսուցչի
կողմից դպրոցում և տանը
3. Դպրոցում Կրթահամալիրում կազմակերպվող մեդիահանրակրթության փորձի
տեղայնացում, մասնավորապես.
 - Դպրոցում կրթահամալիրի կինո-ֆոտոակումբի և լրագրության ակումբի
մասնաճյուղերի հիմնում
 - Կրթահամալիրի մեդիակրթության միջավայրի՝ մեդիագրադարանի,
մեդիակրթության դասավանդողների բլոգների, mskh.am-ի տրամադրում
Դպրոցի մանկավարժական աշխատողներին և սովորողներին
 - Դպրոցի մանկավարժական աշխատողների և սովորողների
մասնակցություն՝
 - mskh.am-ում կազմակերպվող առցանց քննարկումներին և ակումբային
պարապմունքներին
 - Կրթահամալիրում կազմակերպվող ուսումնական մեդիա-նախագծերին.
 - Կրթահամալիրի կողմից կազմակերպվող բաց ստուգատեսներին,
ստեղծագործական հավաքներին
 - Կրթահամալիրի սովորողների և դասավանդողների կողմից կողմից
Դպրոցի կայքի (բլոգի) ստեղծում և շահագործման հմտությունների
փոխանցում, Դպրոցի սովորողների, ուսուցիչների միջոցով դրա
սպասարկում և պահպանում
4. Դպրոցում տեխնոլոգիական հանրակրթության կազմակերպման
Կրթահամալիրի փորձի տեղայնացում
5. Սովորողների և ուսուցիչների ուսումնական աշխատանքի միջոցով Շուշիի
մշակութային միջավայրի՝ հուշարձանների, սովորույթների, կենցաղի, լեզվի,

- պատմության, ավանդույթների, մարդկանց, խնդիրների և բնության, ներկայացում համացանցում
6. Կրթահամալիրի կողմից Դպրոցի մանկավարժական աշխատողների վերապատրաստում հեղինակային կրթական ծրագրով
 7. Համատեղ ուսումնական նախագծերի մշակում և իրականացում
 8. Դպրոցի ստեղծագործող մանկավարժական աշխատողների, սովորողների հոդվածների հրապարակում «Դպիր», «Լուսաստղ», «Հեռադիտակ», «Պարտեզ» էլեկտրոնային հանդեսներում:
 9. Համաձայնագրից բխող համատեղ այլ աշխատանք:

Հասարակական կապեր

Կողմերը ժամանակին և ամբողջական տեղեկություն են տրամադրում իրար իրենց կողմից կազմակերպվող ստուգատեսների, ստեղծագործական հավաքների և այլ միջոցառումների մասին: Կողմերը նպաստում են համաձայնագրով նախատեսված համագործակցությանը հաղորդագրություններով, հրապարակումներով, ազգային և միջազգային մամլո հաղորդագրություններով: Մինչև հրապարակումը կողմերը պարտավորվում են համաձայնեցնել բոլոր քայլերը, որոնք կարող են վիճելի կամ կասկածելի լինել:

Եզրափակիչ դրույթներ

Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և վավեր է 5 տարի ժամկետով: Անհարժեշտության դեպքում այն կարող է հավելվածներ (լրացումներ) ունենալ կամ վերանայվել: Փոփոխություն նախաձեռնող կողմը երեք ամիս առաջ գրավոր տեղեկացնում է մյուս կողմին: Այնուհետ կողմերը կամ վերանայում են պայմանները կամ նոր պայմաններ մշակում:

Համաձայնագիրը կազմվել և ստորագրվել է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակով, հայերեն լեզվով: Կողմերից յուրաքանչյուրը ստանում է մեկ օրինակ:

ԼՂՀ Շուշի քաղաքի Խ. Աբովյանի անվան
հիմնական դպրոց

Շուշի, Ղազանչեցոց 47
xabovyan.dproc@mail.ru

Տնօրեն՝
Նազիկ Նալբանդյան



Երևանի «Մխիթար Սեբաստացի»
կրթահամալիր

Երևան, Ա. Բաբաջանյան 25
www.mskh.am, info@mskh.am

Տնօրեն՝
Աշոտ Բլեյան

